«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Արձանագրություն թիվ 6
22.12.2023թ.

1. ՀԱԱՀ-ում իրականացվող Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների կողմից 2023թ-ին կատարված աշխատանքների հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել ՀԱԱՀ գիտական ստորաբաժանումների 2023թ. տարեկան հաշվետվությունները, ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ և երաշխավորել հետագա ֆինանսավորման.

- ՀԱԱՀ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Ոսկեհատի խաղողագինեգործության գիտական կենտրոն մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ,
- ՀԱԱՀ Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ.
  - Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժին,
  - Ավտոմոբիլային փոխադրումների բաժին:

1.2. Հանձնարարել ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին ստեղծել բուկլետներ և տեսանյութեր ՀԱԱՀ-ում առկա թանգարանների գործունեության վերաբերյալ, ստանալ թանգարանի կարգավիճակ, այնուհետև տեղեկատվական տարբեր հարթակներով իրազեկել հանրությանն ու կրթական հաստատություններին:

2. 2024թ. համար ՀՀ ԿԳՄՍ ԲԿԳԿ-ի կողմից հայտարարված տարբեր մրցույթներին մասնակցության գիտական հայտերի երաշխավորության հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

2.1. ՀԱԱՀ Ագրոտեխնոլոգիայի ԳԿ մասնաճյուղի կողմից՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024թ.» խորագրով մրցույթին մասնակցելու համար «Ցորենի երաշտակայուն սորտանմուշների ստացումը ագրոբակտերիալ տրանսֆորմացիայի միջոցով» անվանումով գիտական թեման

երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մանվել Բադալյան):

2.2. ՀԱԱՀ Ագրոտեխնոլոգիայի ԳԿ մասնաճյուղի կողմից՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024թ.» խորագրով մրցույթին մասնակցելու համար «Միկրոպարարտանյութերի կիրառման տնտեսաէկոլոգիական արդյունավետության գնահատումը կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութով ցանված դաշտերում, Լոռվա տափաստանային գոտու պայմաններում» անվանումով գիտական թեման երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ աշխարհ. գիտ. դոկտոր Հովիկ Սայադյան):

2.3. ՀԱԱՀ Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին կողմից՝ ՀՀ ԲԿԳԿ «Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» խորագրով մրցույթին՝ Գյուղատնտեսություն, պարենային անվտանգություն և հողօգտագործում ուղղությամբ «Նոր ֆունկցիոնալ նուտրիցևտիկների զարգացում» անվանումով գիտական թեման երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աստղիկ Փեփոյան):

2.4. ՀԱԱՀ Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին կողմից՝ ՀՀ ԲԿԳԿ «ԿԻՆ ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» խորագրով մրցույթին՝ Գյուղատնտեսական գիտություններ ուղղությամբ «Կուլտուրոմիկան որպես ջերմային սթրեսի հայտնաբերման միջոց» անվանումով գիտական թեման երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ կենս. գիտ. թեկնածու Նատալյա Հարությունյան):

2.5. ՀԱԱՀ Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին կողմից՝ ՀՀ ԲԿԳԿ «ԿԻՆ ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» խորագրով մրցույթին՝ Գյուղատնտեսական գիտություններ ուղղությամբ «Պրոբիոտիկների ազդեցությունը հավերի արյան և աղիքային կոմենսալ բակտերիաների նուկլեինաթթուների էպիգենետիկական հատկանիշների վրա» անվանումով գիտական թեման երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ կենս. գիտ. թեկնածու Մարինե Բալայան):

3. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի հավանությանն արժանացած մենագրությունն ու ուսումնական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու հարցի վերաբերյալ

3.1. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի կողմից՝ ՀԱԱՀ մեթոդական խորհրդի դրական կարծիքով գիտական խորհրդի քննարկմանը ներկայացված «Հողի ֆիզիկա և բարձր արդյունավետությամբ ոռոգման տեխնոլոգիաներ» անվանումով

գիտական մենագրությունը (հեղինակներ՝ Գ.Մ. Եղիազարյան, Ա.Գ. Եղիազարյան, Ս.Ջ. Թամոյան, Գ.Ռ. Նավոյան) երաշխավորել հրատարակման:

3.2. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի կողմից՝ ՀԱԱՀ մեթոդական խորհրդի դրական կարծիքով գիտական խորհրդի քննարկմանը ներկայացված «Հարկեր և հարկային հաշվառում» անվանումով ուսումնամեթոդական ձեռնարկը (հեղինակներ՝ Ռ.Ջ. Մախմուդյան, Ա.Մ. Գալստյան) երաշխավորել հրատարակման:

4. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Արաբկիր-1» ուսանողական հանրակացարանի ներքին կարգապահության կանոններում առաջարկվող փոփոխությունների հաստատման հարցի վերաբերյալ

ՀԱԱՀ գիտական խորհուրդը միաձայն հաստատեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Արաբկիր-1» ուսանողական հանրակացարանի ներքին կարգապահության կանոններում առաջարկվող փոփոխությունները հետևյալ խմբագրությամբ.

1.1. Հանրակացարանը նախատեսված է ուսումնառության ընթացքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) և Համալսարանի կազմում գործող քոլեջների ուսանողների բնակության համար: Համալսարանը կարող է հանրակացարանի թափուր տեղերում բնակեցնել նաև այլ ուսումնական հաստատությունների ուսանողների և Համալսարանի կազմակերպած կարճաժամկետ դասընթացների մասնակիցների, ինչպես նաև Համալսարանի կարիքավոր աշխատակիցների:

1.2. Ուսանողին և Համալսարանի կազմակերպած կարճաժամկետ դասընթացների մասնակիցներին հանրակացարանում տեղ է հատկացնում Համալսարանի տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորը՝ ուսանողի կամ դասընթացի մասնակցի դիմումի հիման վրա, իսկ Համալսարանի կարիքավոր աշխատակիցներին հանրակացարանից սենյակ է տրամադրվում Համալսարանի ռեկտորատի որոշմամբ:

5. ՀԱԱՀ 2018-2023թթ ամփոփ հաշվետվության վերաբերյալ.

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ